# ՅՈՒՑԱԿ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

## ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

## (1512 — 1800)

### 130

*Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ. ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ, Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարզուանեցի*, 1720, *ԻԸ* (28) + *ՂԶ* (96) = 124 *էջ*։

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*Ինկած է։ Կը սկսի էջ գ-էն։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Անարժան եւ վատս ծառայս Քրիստոսի.*
*պետրոս վարդապետս տատապատացի.*
*որ եւ զայլ նըւիրակ կոստանդնուպօլսի.*
*եառու տպել ըզսուրբ գիրըս ցանկալի։*
*Յիշատակ ինձ եւ իմոցս ամենայնի.*
*աղաչեմ ըզձեզ առել աստուած ողորմի.*
*ընդ որ հայրը մեր յերկինս եւ սուրբ եղիցի.*
*զի եւ ձեզ յիշեցեալ յաղօթից մասն լիցի։*

*էջ գ*

ԾԱՆՕԹ.

Տպագրութիւնը կիսատ մնացած է։ Էջ *իը*-ի (28) վերջաւորութեան՝ նախադասութիւնը ամբողջացած չէ։ Յաջորդ էջը՝ նոր թուակարգութեամբ, տարբեր գլուխ մը կը սկսի («Վասն մոլորութեանց»)։

*Կիւլպէնկեան Մատենադարան*
230·154 *Տա.*

### 131

*ԱՌԱՔԵԼ ՎՐԴ. ՍԻՒՆԵՑԻ. ԱԴԱՄԳԻՐՔ, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի*, 1721, 288 *էջ*։

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա*

*ԱԴԱՄ ԳԻՐՔ, Անցք ադամայ նախապետծին,*
*Դընին ի սմա եւ յուցանին.*
*Այնք որ սիրով լըսել կամին.*
*Մըտցեն ի սա եւ շահիցեն.*

digitised by A.R.A.R.@

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ*

*ԱԴԱՄ ԳԻՐՔ. ՑՈՐՈՒՄՆ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ. Բանք յարմարականք և պատմութիւնք պատշաճաւորք յաղագս Նախնեացն մերոց Ադամայ եւ Եւայի. Համեմատեալ զանազան խորհրդով յադամայ ի քրիստոս, եւ յեւայէ առ Աստուածածինն. ի դրախտէն ի խաչն, եւ ի յօձէն ի յուդա. Եւ յառաջին արարչութենէն ի յերկրորդ նորոգութիւնս. Եւ այլ ինչ բանք զանազանք, այլ-ատնիք եւ հարկաւորք.*

*Արարեալ Տէր Առաքել Վարդապետի բաղիշեցւոյ. եւ Սիւնեաց Եպիսկոպոսի. Գեղեցկայարմար ոտանաւորութեամբ.*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Յիշատակարան տպողի։

*Գոհութեամբ եւ փառօք մեծին աստուծոյ՝ յանկիւցեալ աւարտեցաւ տպեցումն Գրքիս. ի թուին հայոց 1170. ի քաղաքս մայրս ամենայն. ի վեհապետութեան հանուրց հայոց, Տեառն Աստուածատրոյ Երանաշնորհ եւ Սրբազան Կաթողիկոսի. Եւ ի Հայրապետութեան սրբոյն Երուսաղէմի, Տեառն Գրիգորի շնորհազարդ եպիսկոպոսի. Եւ յառաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ, Տեառն Յոհաննիսի Աստուածափայլ վարդապետի. Յորում ամի էր նուիրակ սրբոյ պահին էջմիածնի ի կոստանդնուպօլիս, Պետրոս գերապատիւ Եպիսկոպոսն աստապատցի։*

*Եւ տպեցաւ ի Տպարանի կարապետի որդի մեղաւոր եւ անպիտան աստուածատուրի։ ի մայրաքաղաքին կոստանդնուպօլսի. Հրամանաւ նորին վերադիտողի վերոյիշեցելոյ. ասատաբան քարոզչի. Արդ աղաչեմ եւ զօրեաց զանն մի բարեհէք աւեանց։ Ի փառս մեծութեան միոյն աստուծոյ, եւ յօգուտ բարեմանութեան Աստուածայէք եղբարց։ Արդ՝ որք հանդիպիք այսմ վայելուչ եւ գեղեցկայարմար Գրքուկիս՝ յիշեսջիք ի տէր՝ մաքուր աղօթիւք զաշխատաւոր ծառայքս ձերոյ պատուականութեան, զվերոյիշեցեալ հող ոսկերս ամենեցուն եւ բազմօք մեղօք վարակեալ պատուածատուր ծառայս ձեր զաղօզ որդին. Եւ զծնօղսն իմ հանգուցեալ զկարապետն եւ զմարիամն. Այլ եւ զեղբարհայրս որդեակսն իմ զմինասն եւ զյոհաննէսն. զի կարի յոյժ աշխատեցան. Այլ եւ զաշխատաւոր մշակսն տպագրատանս, զվանեցի վարդանն, եւ զախրացւ թումէն. Եւ զաւք յիշեալ ՀՅխէ ի քրիստոսէ յիսուսէ յուսոյն մերմէ. Ամէն.*

*Իսկ եւ զաշխատաւորէք սրբագրօղ առաքիս՝ զանպիտան ծառայ ծառայիցդ աստուծոյ՝ զպաղտասար քիշին զպիրս յիշել յաղօթս ձեր՝ յոգւոյ գեղերիմ. Եւ զայս ինչ յայտ առնեմ վերատպաւորութեան եղբարցդ. Զի ի 1166 թվին հայոց՝ տպեցաւ մեկնութիւն յոհաննու աւետարանին օգնութեամբն աստուծոյ, որ յայտ է. Բայց մինչ յայնմ ժամանակի էհաս տպօղն յեզր նորին եւ սկսաւ շարել զառաւաւորն որ ի մերմէ նըատասութենէս էր շարադրեցեալ, ի պատահմանէ իմեքէ՝ ո՛չ կարացաք զնալ ի տպագրատանն եւ սրբագրել զշարեցեալ կարգա-կայսն. վասնորոյ յանփորձ տանկլոյ տպաղն քանի մի ինչ տեղի սխալանս ընկալաւ. Եւ մինչ փնտրաք զտպեցեալն եւ ծանեաք զսխալանսն՝ արդմութեան ոչ առկաւ էառ գպրիս. Բայց վասն կարի յոյժ դժուարին գոլոյ սրբագրել զտպեցեալն՝ թողաք այնպէս, ակնունելով ի դիպօղ ժամանակի է վերջինում գրքի իմիք վերըստին տպել զնա ուղղապէս թէ տէր կամեսցի։*

*Իսկ աստանօր ի վերջնում փոքրիկ այսմիկ մատենկանս՝ կամ եղեւ ուղղագրել համառօտակէս զսխալանսն նորա. զի զուցէ ոչ կարասցեալ ժամանել մեր վերըստին տպեցմանն՝ մնասցէ այնպէս թիւրեցեալ, եւ ուղղագրութիւն ի տարակուսանս. Զի նոյ_իմն գոլով շարադրեցեալ՝ ոչ ունի ուրեք օրինակ։*

(Կը յաջորդէ Ենքրուածներու սրբագրութիւնը)

*... Թաչոր լեցի բանաւիրացդ անձանց, զի թէպէտ վասն շարադրողի գրքիս՝ բազմ-ւեցի էր զրեցեալ յօրինակն եւ մեք եւս այնպէս եդաք ի տպրանն ի խորագրեն, սակայն անպեկացաք յետոյ, թէ ոչ է նա բաղիշեցին, այլ՝ սիւնեցին. որ է քեռորդի սրբոյն Գրիգորի տաթեւացւոյն. Որոյ աստր չերեւին է այժմ ի յանապատն շատախու. եւ առնէ մեծամեծ բարանչելիս ի փառս յիսուսի քրիստոսի աստուծոյ մերոյ. Որոյ մաղթանօքն անուա աղաչէ տէր պյանցանս մեր. Ամէն ։*

*Կիւլպէնկեան Մատենադարան.*
811·24 *Աս.*

digitised by A.R.A.R.@

## 132

ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԱՐԱԿՈՆԱՑԻ. ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ: Հրտ. Մխիթար Սեբաստացի, Վենետիկ, տպ. Անտոն Պորթոլի, 1721, 8 չհ. + 694 + 2 չհ. = 704 էջ:

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

*ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ Նորոգ նախ ընծայեալ Զեօթեանց առաքինութեանց. այսինքն, զՀաւատոյ, զՅուսոյ, եւ զՍիրոյ. զԽոհեմութենէ, զՈղջախոհութենէ, զԱրիութենէ, եւ զարդարութենէ: Այլեւ զԵօթեանց պարգեւաց, հոգւոյն սրբոյ. Եւ Վերջապէս զերանութեանց աւետարանականաց: Անդրանկեցեալ ի լատինականէն ի Հայ բարբառ, ի պատուական նախնեացն, ի վաղընջուց ժամանակաց: Իսկ այժմ ի լոյս ածեցեալ՝ աշխատասիրութեամբ եւ սրբագրութեամբ Տեառն Մխիթարայ Վարդապետի Սեբաստացւոյ, Աբբայ Հայր Կոչեցելոյ: Եւ տպագրեցեալ արդեամբք Պարոն Սարգսի, որդւոյ Տիրացու Գէորգի Կոստանդնուպոլսեցւոյ: Ի փառս մեծութեան աստուծոյ. եւ ի պատիւ Ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու: Ի Հայրապետութեան Տեառն Աստուածատրոյ Ամենից Հայոց Կաթողիկոսի: Յամի Տեառն 1721. Իսկ ի Թուին Հայոց ՌՃՀ. Յունվարի 17.*

*Ի Վէնէտիկ. Ի Տպարանի Անտոնի Պորթոլի: Հրամանաւ Մեծաւորաց. եւ Փրիվիլեճիով Գերապանծապայծառի Վեհապետի:*

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Չունի:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
230.2 *Ար.*

## 133

ՀԱՄԱՌՕՏ ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ: Կ. Պոլիս, տպ. Սարգիս Դպիր, 1721, ՄԾԶ (256) էջ:

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

*ՀԱՄԱՌՕՏ ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ: Արարեալ յառաջին ուղղափառ եւ յԱստուածաբան Վարդապետաց: Տպագրեցեալ ի Հայրապետութեան տեառն Աստուածատրոյ Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ ի պատրիարքութեան սուրբ երուսաղէմի եւ կոստանդնուպոլսոյ տեառն Գրիգորի եւ Ովհաննիսի Աստուածաբան վարդապետաց: Ի թուին Հայոց. ՌՃՀ: ի Մայիսի ամսոյ. Է: Ի Տպարանի Մարտիրոսի դպրի որդւոյ Սարգսի եւ Նորին իսկ արդեամբ:*

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան մատենիս:

*Ողորմութեամբ Ամենասուրբ Երրորդութեան, եւ բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին, եւ ամենայն սրբոցն աստուծոյ, եղեւեալ վերջացաւ փոքրիկ գրքոյկս աղօթից՝ ի պատիւ եւ ի փառս վերոյ գրեալ երեքսրբեան տէրութեան եւ մի աստուածութեան հօր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյն. որ է օրհնեալ յանդրաւ յաւիտեանս ամէն: Արդ՝ որք կանդիպիք սմա՝ ստացմամբ, կամ ընթերցմամբ, յիշեսջիք ի տէր զաղօթ մատենիս գծրողս Սարգիս. եւ զհանգուցեալ որդեակն իմ զԳէորգն: Այլեւ զաշխատաւոր մշակ տպագրատանս՝ զՏէվլէթն եւ զԱբրահամն: Նաեւ վերջապէս յիշեսջիք եւ զսրբագրող մատենիս Զուխառատէր որդեակն իմ զՄարտիրոսն: Եւ դուք որք յիշէք զմեզ միով հայր մերիւ, յիշիք յիշեցեալք ի Քրիստոս Ամէն:*

digitised by A.R.A.R.@

*Ի մատենիս աւարտման.*
*քեզ միածին ատուած բան.*
*մատուցանեմք յանվախճան.*
*փառք եւ պատիւ յաւիտեան։*
*Թըւական հայկազեան.*
*Ութնեակ տասնիկ ի լրման.*
*Ամ'եւ երկեակ յաւելեան.*
*առ-ք ի հաշիւն հազարեան.*
*Ա'յն է Թուական արամեան։*
*Եւ եթէ չկամիս որոնել.*
*այլ պարզապէս առնանել.*
*կայ ի սկզբան մ'նացել,*
*բա՛ց եւ կարդա՛ ի գիրս.*
*Ի սեպտեմբերի ԻԲ։*

Կիւլպէնկեան Մատենադարան
241 Սկ.

## 134

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԱՂԲԻՒՐ ԲԱՐԻ։ Թրգմ. եւ կզմ. Պետրոս Վրդ. Թիֆլիսեցի։ Վենետիկ, Հրտ. Մխիթար Վրդ. Սեբաստացի, տպ. Անտոն Պօրթոլի, 1722, 359 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԱՂԲԻՒՐ ԲԱՐԻ Արտահանեցեալ ի գրեանց լատինացւոց. եւ ի հայկական բարբառ շարադրեցեալ. ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ։

Եւ ի լոյս ածեցեալ Հոգաբարձութեամբ եւ օրհնութեամբ Տեառն Մխիթարայ վարդապետի սեբաստացւոյ։

Տպագրեցեալ Արդեամբք պարոն Սարգսի որդւոյ Տիրացու Գէորգի կոստանդնուպօլսեցւոյ։

Ի Հայրապետութեան, Տեառն աստուածատուր, ամենից Հայոց կաթողիկոսի։

Յամի Տեառն 1722։ Յուլիսի 15. Ի Վէնէտիկ. ի Տպարանի Անտոնի Պօրթօլի։

Հրամանաւ մեծաւորաց։ Եւ փրիվիլէճիօվ գերազանցագունեղի Տէրութեանն։

ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան
241 Պե

## 135

ՃԱՇՈՑ. Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1722, 976 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

ՃԱՇՈՑ ԳԻՐՔ ԳԵՂԵՑԿԱՏԻՊ ԵՒ ՎԱՅԵԼՈՒՉ գաղափարեցեալ ի մատենից հընոց Թարգմանչացն Հայոց։

Տպագրեցեալ Բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրաւարին։

Ի Թուականութեանս մերում, ՌՃՀԱ։ Յունիսի Ը։ Իսկ ի Թուի Փրկչին, 1722։ Ի քաղաքն Կոստանդինու պօլսի։ Ի տպարանի պարոն Կարապետի որդի աբբալ աստուածատուրին։

digitised by A.R.A.R.@

## ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ անհասանելւոյ մարդասիրութեան եւ գերազանցեալ գթութեամբ ամենարարի կամաց արարչագործողին բոլորից· որ ամենատեսն է առ ի հեղումն անճառելւոյ իւրական շնորհաց յորդաբուխ ձեռաց իւրոց առ ի լրումն ոգեկանաց եւ մարմնականաց· նոյնիւրն քաղցրութեամբն իւրով վեր առեալ զանարժանութիւն մեր եւ շարժեաց զմեզ վերստին ի գործս այս։ Ուստի եւ մեք ըղձիւ հայցեացուք տալ յաստուածային զօրութենէ իւրմէ զօգնականութիւն անկարութեան մերոյ առ ի յաւարտ ածել անթերաբար զաստուածային գիրքս որ կոչի ճաշոց հին եւ նոր կտակարանաց նեթ պարունակօղ, շարադրութեամբ սրբոց նախնեացն մերոց թելադրութեամբ հոգւոյն սրբոյ ըստ պատշաճի աւուր իւրում ընթեռնուլ։

Արդ եղեւ ընկիզըն սորին, ի հայրապետութեան մեծի լուսաւորչական աթոռոյն էջմիածնի՝ տեառն Աստուածատրոյ սրբազան եւ աստուածարեան հովուապետի եւ հանուրց հայոց գլխոյն· եւ ի պատրիարքութեան լուսաճաճանչ սրբոյ քաղաքին Երուսաղէմի· տեառն Գրիգորի աստուածարեան վարդապետի· եւ նորին հաւատարիմ եւ սրբոց տեղեացն անօրինականաց տեառն մերոյ մշտայօժար սպասաւորի՝ տեառն Յոհաննիսի աստուածարեան վարդապետի եւ վերակացուի մեծի մայրաքաղաքին կոստանդնու պօլսի։ Զոր տէր աստուած ընդ երկայնաւուրս արասցէ ի փառս իւր եւ ի պարծանս մեր Ամէն։

Ընդ հովանեաւ հռչակաւոր և նորաշէն եկեղեցւոյս մերոյ սրբուհւոյ աստուածածնին։

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան Սրբոյ Մատենիս, եւ Տնօրինողի Եկեղեցական ընթերցուածոց:

*Փառք պատիւ եւ երկրպագութիւն...*

*...Որպէս ահա՛ եւ իմս անարժանութեան ո՛չ հայելով ի բազմութիւն յանցանաց՝ յօ կարողութիւն եւ յաջողումն ի ծանրագոյն եւ աշխատելւոյ արժանի գործառնութեանս, ածել յաւարտումն կատարման զճաշոցս զայս զՉարգարիչս եկեղեցւոյ ընթերցման ըստ կարգաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ։ ըստ սահմանելւոյ սրբոց Հայրապետացն։ Որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի։*

*Եւ արդ՝ կամօք եւ կարողութեամբ նոյն ամենարարի եւ պարգեւատու արարչին, Մաղթանօք եւ Հայցուածովք Երանուհւոյ եւ միշտ կուսին Մարիամու Աստուածածնին, եւ Արդարոյ սրբոյն Մինասայ երջանիկ վկային մաղթանօքն, եղեւ գրել տպեցման ամենարաբերուգի եւ վայելչագեղ ճաշոցիս, ի թվականիս մերոյ ՌՃԻԲին. գարնանաբեր յունիս ամսոյն Ժ:*

*Ի Հայրապետութեան Աստուածանկար եւ տիրակառոյց, քրիստոսաէջ եւ երկնահանգոյն Աթոռոյն էջմիածնի, Արհի եւ պանծալի Վեհապետի, եւ Սրբազան Քահանայապետին Աստուծոյ, Տեառն Աստուածատրոյ ընդ հանուր կաթողիկոսի։ Եւ ի Պատրիարքութեան Քրիստոսաշիրմն տիեզերահռչակ եւ ամենապայծառ աթոռոյ սրբոյ Առաքելոյն Յակոբայ ~~եղ-~~ բօր տեառն, Արժանապատիւ եւ սրբազան քարոզչի եւ աստուածարեան վարդապետի տեառն Գրիգորի արդ Եպիսկոպոսի։ Իսկ եւ յԱռաջնորդութեան Մայրաքաղաքիս Կոստանդնու պօլսի, վսեմական հեղինակի եւ տառապեան քարոզչի տեառն Յոհաննիսի Աստուածարեան Վարդապետի Որոց կեանս երկարս տացէ տէր աստուած մեր ամէն։*

*Այլ եւ արդեամբք եւ ձեռնտուութեամբ գոյից գործարանիս, յակնայ հողէն Ապուչեխցի Մահտեսի Միրիճանի որդի խօճա՛յ Մկրտչին։ Որ եղեւ պատճառ տպեցման ճաշոցիս, օգնութիւն տանելով գործոց գործարանիս՝ ընչիւք եւ հոգաբարձութեամբ։ Նեւ տպարանի կարապետի որդի բազմամեղ եւ ամենուն ծառայ տրուպ աստուածատուրի. ի Կոստանդնու պօլիս քաղաքի։ Հրամանաւ Նորին վերոգրեցեալ վեհապատիւ հեղինակի։*

*Արդ՝ որք հանդիպիք այսմ աստուածային մատենիս, երբեւ ի հող ծածկեալ եւ նորթուր անկեալ առաջի ձեռինդ եղբայրութեան՝ աղաչեմ եւ աղերսեմ, զի միով հայր մերիւ կամ միով եւ եթ ողորմեայիւ յիշեսջիք ի տէր զվերոգրեցեալ պատճառ տպեցման սրբոյ գրքիս, զբարեբաստ եւ զբարեպաշտօն անձն զխօճայ Մկրտիչն։ Այլ եւ յիշեսջիք զբարերարօղ որդիսն նորա զճանուոմ աղայն. եւ զչէլէպի գաբրիէլն, եւ զթոռն բարեսէտեան զչէլէպի միքայէլն։ Այլ եւ զկողակից եւ զկենակից նորին զմէրտին խաթունն։ Եւ զգաւերան բարեպաշտածին ծնողին, զաննա՛ խաթունն, զսառա՛ խաթունն. այլ եւ զմահտեսի եռնոփարն, եւ զմահտեսի սիմայն։ Եւ զնոր հանգուցեալ ծնօղսն զմահտեսի միրիճանն եւ զմահտեսի սըրբուհին։ Այլ եւ զեղբարսն զմահտեսի խանումն, եւ զպարօն ճանումն. եւ զդստերսն զտիրուհին։ Այլ եւ զվերջն նուրվաթին, տիրուհւոյն, յաննայինն. եւ յաներուջն մահտեսի ամէ-*

digitised by A.R.A.R.@

*ողի. եւ զկենակիցն նորին մահտեսի վարդին. եւ դստր ամենայն համօրէն հատաստար արեան առու ննջեցելոցն նորին։ Այլ եւ զծարերպաշտօն որթանիներն, զխօճա նիկողոս եւ զխօճա մարկոսն. եւ զաշխատաւոր մշակն նոյին զպարոնթիւնն. հանդերձ ննջեցելովք նոյին յիշեալ լիր ի տէր։*

*Հաւաք յետոյ՝ յիշեսջիք եւ զաշխատաւոր տպագրատանս զվերոյ յիշեցեալ զանդրուն եւ զմեծարժան բազմավաստակ տառատաշտասերս։ Որ յոյժ եղէ աշխատ ի ընուլ զպակասութիւն տպագրութիւն սորա տպեցման ճաշոցի գրքիս ի ճարել եւ ի կատարումն սորեղ զամենայն։ Այսինքն թէ զկանոնական եւ զծաղկական տիպսն. եւ թէ զվայելչապէս մարգարիտ գիրսն. զորս բազում երկամբք եւ զոյից ցրմամբ բերաք ի լրումն բոլորին. ի փառս մեծին աստուծոյ եւ ի պայծառութիւն սրբոյ ուխտի եւ մանկանց նորին։*

*Յիշեսջիք եւ զհանգուցեալ ծնողսն իմ զկարապետն եւ զմարիամն։ եւ զորդեակն իմ զմխիթար աշխատասէր պարոնին։ Եւ զմիւս որդեակն իմ զծառայն ձեր զղեւոնդ յօհաննէսն. զաշխատաւորն եւ զբազմավաստակն։ Որ բազում եւ չափ աշխատանս ունի ի վերայ գործարանիս ի շարել եւ ցրուել զկատարեալ տառսն. առաջ նման տէր կեանս երկարս եւ միտս զգօնականս եւ խոհեմականս՝ եղբարցդ աղօթիւք ամէն։ Յիշեսջիք եւ զհանգուցեալ աներքն իմ զմահտեսի չէհրին եւ զկենակիցն նորին։ Այլ եւ զհոգեւոր եղբայրն իմ զալիքսանն հանդերձ ծնողիւքն։ Այլ եւ զաշխատաւոր եւ զբազմաջերան, զերախտաւոր եւ զպարկեշտ մշակ գործարանիս զմեղրեցի նառեպե որդի զաթրացու յարութիւն։ Այլ եւ զմիւս վաստակաւոր մշակն զվանեցի եաղշի աւետ որդի տէրոյցու մխիթարն։*

*Եւ որք յիշէք յիշեցեալ լիջիք ի քրիստոսէ յիսուսէ յաւուրն մեծմէ. Որ է օրհնեալ գովեալ եւ բարեբանեալ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն անեղ եւ անզրաւ յաւիտեանս. Ամէն։*

*Հայր մեր...*

*Կիւլպէնկեան Մատենադարան*

264·6

1722

ԾԱՆՕԹ.

Էջ 15-ի վրայ կը գտնուի Ֆիրթուած մը՝ «Ահ ծնօղն Աստուծոյ պարծանք» մայրն ամէնօրհնեալ վերնագրով, որուն տուներուն առաջին տառերուն սկզբնատառերը գիրերը կը կազմեն «Ի Գաղատացւոյ»։

## 136

***ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ***։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1722 (տպար. 1723), ԳծԿ (380) էջ։

***ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ***

***ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ***։ *Կարգաւորութիւն եւ հրահանգ տէրունական տօնից։ Զոր կարգեալ եւ սահմանեալ Խոսհակայ հայրապետէ ըստ արարողութեանցն հայաստանեայց։ Այլ եւս եթաք ի միջի սորին այժմաւորաց ճաշոց ըստ ցուցակի յաւուրցն զի խնդրողացն դիւրաւ գտանիցի։*

*Արդ ի սկիզբն եղեւ տպեցման սորին բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրավարին։ Ի Թըւականիս մերում.* ռճհա։ *Մարտի ամսոյ ծ։ Ի տպարանի կարապետ որդի աբրայ աստուածատուրոյ։*

***ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ***

Յիշատակարան Մատենիս։

*Անճառելի եւ անքննելի...*

*...գ.նա եւ մեզ այժմ մանաւանդ ընթերցասիրականութեանցն՝ եւ ընտանանականական զիւպեցման ամանակի, եւ կրկայական յաւիտենին. եւր անհնարին էր անձին մեղապարտի՝ արժանաւորել գործոյ սորին յանգման, սակս անթիւ եւ անկշիռ անօրէնութեանցս իմոց. Եւ ընդ այնց սակայն ուժգնութիւն եւ կարողութիւն զթանդրն՝ անհասանելն՝ անսահ-*

digitised by A.R.A.R.@

կոյն, եւ բազմապարգեւն՝ առ ի պայծառացուցանելոյ զայս մատեան սրբոյն յիշատակաց որ ասի ատենագոյց՝ յաւագոյն փութացուցանել ի փառս իւր, եւ ի փայլումն ամենայն եկեղեցականաց տպագրութեանց. որ եւ աջողութեամբն եւ կարողութեամբքն իւրով՝ ստեղծեցաւ ի մայիսի ամսոյ է. ի քաղաքն բուզանդիոյ: Արդ ո՞վ ընթերցողք հայրք եւ եղբարք՝ աղաչեմ զձեզ եւ խնդրեմ յաստուածասիրութենէդ ձերմէ. զի ամ ըստ ամէ՝ ընդ ի վճարումն կատարել յիշատակացս մատենիս այսորիկ, յիշեսջիք զմահտեսի Չարախանբն. եւ զպատրոն Յարութիւնն. որք բազում ընչիւք եւ մեծաւ ջանիւ նոցին տպել զգիրքս զայս. Վասն զի լրման հասուցանել զսորինն ուղղութիւն առնել ըստ զայլ ատենացոյցն, այնու խեղ առաւել վասն որոյ փութացան ի գործ ածել զսա տպագրութեան: Ամէն:

Այլ եւ յիշեսջիք ըղձարարութեամբ սորին Յոհաննէսն մինչ աստուածն եղբայրակցի զի կարի յոյժ աշխատեցաւ ի վերայ սորին ուղղելով ի սրբէ եւ ի գրչէրի: Այլ եւ յիշեսջիք զաշխատաւորս գործարանիս մեղրեցի տիրացու Յարութիւնն եւ վանեցի տիրացու Թումէն:

Կիւլպէնկեան Մատենադարան

204·1

1722

## 137

ԳԻՐՔ ԵՒ ՁԱՅՆ ՀՈԳԵՇԱՀ Արարեալ Յուղղափառ եւ Յաստուածաբան վարդապետաց Եկեղե-
1722, 488 էջ:

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ԵՒ ՁԱՅՆ ՀՈԳԵՇԱՀ Արարեալ Յուղղափառ եւ Յաստուածաբան վարդապետաց Եկեղեցւոյ: Որ պարունակէ՝ Ներ բնական համառօտագոյն զձայն յորդոյն խորհրդաւորս Տէրունական տօնից, սկսեալ ի Ծննդենէն Քրիստոսի մինչ ի խաչվերաց տօնն. քաղցր բանիւք եւ մեղրածորանիւ վարդապետութեամբ:

Եւ արդ ի լոյս ածեցեալ Սրբազնութեամբ եւ Տպեցմամբ Մարտիրոս դպրի կոստանդնու պօլսեցւոյ. եւ Բղթաստութեամբ Պարոն Մնացականի կոստանդնու պօլսեցւոյ: Ի փառս աստծոյ եւ Ի պատիւ սրբուհւոյ Աստուածածնին:

Ի Հայրապետութեան Հայոց Տեառն Աստուածատրոյ սրբազան Կաթուղիկոսի: Յամի տեառն. ռչիբ: Ի Թուին Հայոց. ռճհա: ի յուլիսի գ: եւ Ի պատրիարգութեան սուրբ Երուսաղէմի Գրիգորի արքեպիսկոպոսի: եւ կոստանդնու պօլսոյ տեառն Ոփհաննիսի աստուածաբանի. եւ նորին իսկ հրամանաւ:

Ի տպարանի Սարգսի ի բուզանդիոյ:

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Բան առ ընթերցողս:

...Վասն որոյ՝ ո՛վ եկեղեցական եղբարք՝ ընդունարուք զսա ցանկացեալ զեղոյ գեղեցկարան վարդապետութեան սորա: Որ արդարեւ ջեռուցանէ զսիրտս մարդկան աստուածային սիրով՝ որով վառեալ բորբոքի ի խորհուրդս մեր հուր երկնային բաղձանաց: Եւ յընթեռնուլն ձեր զսա թէ գտանիցի բառ ինչ կամ բան եւ կամ տառ սահեալ յարհեստէ գերթողութեան, ներեցէ՛ք սխալութեանս. զի ի միոյ խանձեցեալ օրինակէ արտեւլացանել հազիւ կարացաք այսքան: Այլ դիմաւորեալ զբանս յուսալով ի Հոգին սուրբ, եւ յաղօթս ձեր, սկսանիմ ի գործ սրբագրութեան սորին: Տառայ տեառն, եւ ձերդ աղնուականութեան, Մարտիրոս յետին դպիր բուզանդեան:

էջ 5

digitised by A.R.A.R.@

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Ա

Յիշատակարան Մատենին:

Փառաւորեմք զամենասուրբ երրորդութիւն եւ զմի աստուածութիւն՝ Հօր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյն։

Որ ետ կարողութիւն տկար ծառայիցս՝ յաւարտ ածել զտպումն այս քաղցրահամ եւ ախորժաճաշակ գրոյս՝ այսինքն, ռէքրուճական ճառիցս։ Որ է արդարեւ ջերմեռանդ սրտի վերծանողաց՝ պատճառ բարեաց եւ տուիթ ընկալման երկնային շնորհաց։

...Վասն որոյ՝ յիշատակելի ձեր զաս յաղագս ամ յայտնիս օգտութեանց սորին, յիշեցէ՛ք ի տէր զաշխատասիրս տպեցման սորա. զԳեւորգն եւ զՅեւլէթն եւ զԱբրահամն։ Այլեւ զտիրացու Յակոբն. եւ զհայրն իմ ծերունի զՍարգիսն եւ զմայրն իմ զլուսինն. եւ զքոյրն իմ զՇնդխաթունն. եւ զհանգուցեալ եղբայր իմ զԳէորգն։ Զի եւ դուք յիշեցեալք լիջիք ի քրիստոսէ Ամէն։

Այն որ ասէ՝ հայոց թուին. երկեակ բառիւ՝ գրեցի այսօրինակ. թէ զո՞յ լեալ ով՝ հայրիկ հարկի. ըն եօթնեակ ատոմ՝ ամս եւ երկիկ։ Ի փետրվարի իգ։

էջ 487–488

Կիւլպէնկեան Մատենադարան

264·0 Ճա

## 138

ԼՈՐԷՆՑԻՈՍ ՍԿՈՒՊՈԼԻ. ԳԻՐՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ։ Վենետիկ, տպ. Անտոն Պօրթոլի, 1723, 368 էջ.

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ Շարադրեցեալ ի վերապատուելւոյ Հօրէ Լօրէնցիոսէ Սկուպոլի Կղերիկոսէ Կանոնաւորէ։ Թարգմանեցեալ ի յաւէժնէ ջերմեռանդէ, ի լեզուէ իտալականէ ի հայկական բարբառ։ Եւ ի լոյս ածեցեալ հաղարարձութեամբ, եւ արդիւնաւորութեամբ նոյնոյ թարգմանչի։

Տպագրեցեալ արդեամբ, եւ ջոյիւք Կոստանդնուպոլսեցւոյ Յոհաննիսի որդւոյ Տիրացու Պօղոս Գէւորգին։ ի Հայրապետութեան, Տեառն Աստուածատրոյ ամենից Հայոց կաթուղիկոսի։ Յամի Տեառն 1723. Հոկտեմբերի 20։

Ի Վէնէտիկ. ի Տպարանի Անթոնի Պօրթոլի։ Հրամանաւ մեծաւորաց, եւ փոխվիլեճիով գերագանցագոյնեկի Տէրութեան։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան

244 Ակ

## 139

ԳԻՐՔ ԴԻՎՐՈՒԹԵԱՆ։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1723 (աւարտ. 1724), 288 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ԴԻՎՐՈՒԹԵԱՆ։ Եւ Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ. ի զանազանից բանաստեղծից շարադրեցեալ ի խրախճանս մանկանց Սիոնի։

Բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրավարին։

Տպագրեցեալ եղեւ ի Հայրապետութեան Տեառն Աստուածատրոյ Սրբազան Կաթողիկոսի։ Ի տպարանի պարոն Կարապետի որդի արբազ աստուածատուրի ի Թվականին մերում, ռճհբ Նոյեմբեր ամսոյ, աին։

digitised by A.R.A.R.@

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Յիշատակարան տպողի՝

*Տպագրեցաւ գիրքս բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրաւարին· որ կոչի տաղարան, հարուստ եւ գեղեցիկ· ի զանազան բանաստեղծից շարագրեցեալ ի խրախճանս մանկանցն սիոնի:*

*Արդ աւարտեցաւ սա ի Թուաբերութեան Հայոց,* ռճհբ: *Յունվարի* գ;

*Աղաչեմ զձեզ ով ոք որ հանդիպի սմայ· յիշեցէք ի Քրիստոս զբազմամեղ տառապեալ ծառայս տպող զորին· նաեւ զշարողս սորին, զորդեակն իմ զյովհաննէսն որ է ծառայ ձեր: Այլ եւ յիշեսջիք զաշխատաւոր մշակսն գործարանիս, զվանեցի տիրացու մխիթարն. եւ զեղբայրն զկանտին եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ յուսոյն մերմէ Ամէն:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*

264·4

1723

140

*ՏՕՄԱՐ: Կ. Պոլիս, տպ. Գրիգոր Մարզուանեցի*, 1723, 264 *էջ:*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՑ. Հայոց Հռոմայեցւոց եւ Պարզատոմար Ընդ որոց եւ Տաղ մեծի Լուսաւորչին մերոյ: Մարմնախաղաց եւ հարուստ Երազահան եւ այլ բանք պիտանիք:*

*Ի Հայրապետութեան Տեառն Աստուածատրոյ Սրբազան Կաթուղիկոսին: Եւ ի Պատրիարգութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Գրիգորի Աստուածաբանութեան Վարդապետի: Եւ Առաջնորդութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Յօհաննիսի Աստուածաբանութեան Վարդապետի:*

*Տպեցեալ եղեւ ի մայրաքաղաքն ստամպօլ. Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի բազմահրաշ եկեղեցւոյն:*

*Յամի Քրիստոսի:* (ռէճիգ:) *Հայոց Թուոյ:* (ռճհ:)

*Ի տպարանի գրիգոր դպրի մարզուանեցւոյ:*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Խնդրեմ յիշել ի Տէր զաշխատաւորսն գործարանիս, զապահար յակոբ սարկաւագն. եւ զմրահար եառյին. եւ զշարող գրոց գրքոյս զփոքր ներսէս, համայն ննջեցելովք մերովք եւ ձեօք հանդերձ:*

*Հայր մեր որ յերկինս ես:*

*Ո՛վ բարի ընթերցող՝ թէ գթիւն եւ զվերադիր տարւոյն իմանալ կամիս. պարզատոմարի յառաջքն տես.* (ռճհ.) *եւ վերադիրն իւր որ է.* (ժա.) *եւ այլն այսպէս զամենեսին կարգաւ անսխալապէս:*

*Այլեւ յիշել հայցեմ զձէնջ զտիրացու մնացականն՝ հանդերձ համայն ննջեցելովքն. որ յիշէքդ վարձս ի Քրիստոսէ ընկալջիք:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*

264·11

1723

ԾԱՆՕԹ.

Անուանաթերթին մէջ յիշուած տպագրութեան հռոմէական եւ հայկական թուականները իրարու չեն համապատասխաներ. *ռէճիգ*=1723, *ռճհ*=1720:

digitised by A.R.A.R.@

## 141

**ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀՈԳԻՈՑ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԵՒ ՀՐԱՇԱԼԵԱՑՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ։** *Թրգմ. Յովհան եպս. Թոխաթեցի։ Վենետիկ, տպ. Անտոն Պօռթոլի,* 1724, 576 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ՊԱՏՄԱԳԻՐՔ, ՀՈԳԻՈՑ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՆՆՋԵՑԵԼՈՑ։ Եւ Հրաշալեացն սրբազնութեան։*

*Արտահանեցեալ ի հոգեւոր գրեանց, եւ յեկեղեցական պատմութեանց ի տալիակա— նաց, եւ ժողովապէս ի Հայկական բարբառն շարադրեցեալ, աշխատութեամբ Տեառն Յո— հաննու Եպիսկոպոսին Թոխաթեցւոյ։*

*Տպագրեցեալ, եւ ի լոյս ածեցեալ հոգաբարձութեամբ եւ արդիւնաւորութեամբ նորին Եպիսկոպոսին, ի փառս Աստուծոյ, ի շահ կենդանեաց, եւ ի օգուտ ննջեցելոց։*

*Ի հայրապետութեան Տեառն Աստուածատրոյ, ամենից հայոց կաթողիկոսի։ Յամի Տեառն* 1724*։ ի Մարտի ը։*

*Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անթոնի Պօռթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց. եւ Փաւիլիէ— ճիով Գերագանցագունեցի Ծերակուտի։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
248 *Յո*

## 142

**ՎԱՐՔ ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՍՐԲՈՑ ՅՕՀԱՆՆԻՍԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ։** *Թրգմ. Յովհան եպս. Թոխաթեցի։ Վենետիկ, տպ. Անտոն Պօռթոլի,* 1724, 320 + 2 *չհ.* = 322 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ՎԱՐՔ ԵՐԱՆԵԼԻՈՑՆ ՍՐԲՈՑ ՅՕՀԱՆՆԻՍԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ. Հօրն աղքատաց. եւ հիմնողին սըր— բազանի կարգին հիւրանոցաց եւ հիւանդանոցաց. բարի եղբարց կոչեցելոց։*

*Գրեցեալ յումեմնէ կրօնաւորէ Յիսուսեան կարգէ, կարգաւ վայելչագունիւ եւ պարզ շարադրութեամբ։ Արտահանեալ ի լեզուէ ի տալիականէ, եւ ի հայկական բարբառն շա— րադրեցեալ աշխատութեամբ Յովհաննու Եպիսկոպոսին Սեբաստիոյ։*

*Յամի Տեառն* 1724*. ի փառս Աստուծոյ։ Ի պատիւ մօր Տեառն, եւ Յօհաննիսին։*

*Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անթոնի Պօռթօլի։ Հրամանաւ Մեծաւորաց եւ Փաւիլիէ— ճիով Գերագանցագունեցի Ծերակուտի։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
922·12 *Վա*

## 143

**Մ. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ։** *Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլ— սեցի,* 1724 (*աւարտ.* 1725), 404 *էջ։*

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ասացեալ բան մխիթարութեան, առաջի Հայոց վասն մանկանցն որ օրհնեն զխաչս. յանուն նորա ցնծութեամբ.

Ի Թուոջս մերում ռճհգ: Նոյեմբեր, Ժ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տպագրեցաւ գիրքս բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ զօրավարին, որ կոչի ձի-աւոր որդի. Ի տպարանի տրուպ աստուածատրոյ: Թվ. 1174:

Կիւլպէնկեան Մատենադարան

Ֆ11·21 Ծն

144

ՇԱՐԱԿՆՈՑ: Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի, 1724, 528 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

Յառաջաբանութիւն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՔ: Աստուածային եւ երջանկաց սրբոց վարդապետաց Հայոց Թարգմանչաց. ի լուսաւորութիւն եւ ի պայծառութիւն եկեղեցեաց Հայաստանեայց: Ըստ աւուրց պատշաճին զտէրունեացն եւ զսրբոցն զօրհնութիւնս. քաղուածովք եղաք զի մի ոք աշխատեսցի որոնել. նայեւ զգիշերապաշտօնն, Զտէրունեացն եւ զմարտիրոսացն եւ զաւուր պատշաճն իւր սարօքն եղաք կարգաւ:

Ի Թվականիս, ռճհգ: Յունվարի ա:

Ի տպարանի տրուպ աստուածատրոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան:

Շնորհօք եւ ողորմութեամբ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. եւ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ Սրբոյն Մինասայ զօրավարին. յանգ ելեալ աւարտեցաւ տառս երաժշտական. որ եւ կոչի ձայնքաղ Շարակնոց:

Ի Հայրապետութեան տիրակառոյց արփիացնցուղ եւ երկնահանգոյն Աթոռոյ Սրբոյ էջմիածնի, Արհիական գլխոյն եւ Սրբազան Հայրապետին, Երիցս երանելւոյ Տեառն Աստուածատրոյ Գերերջանիկ կաթողիկոսին ամենայն Հայոց.

Եւ ի Պատրիարգական տեսչութեան Քրիստոսաշրջիկ եւ յուսաստհման քաղաքին Երուսաղէմի, եւ Քրիստոսահիմն Աթոռոյ Սրբոյն Յակոբայ Տեառն Եղբօրն, վսեմական գիտապետի տեառն Գրիգորի սրբազան եւ բանիբուն վարդապետի բաղիշեցւոյ.

Իսկ եւ յԱռաջնորդական վիճակութեան Կոստանդնուպօլսոյ մեծանուն քաղաքի. եւ Աթոռոյ սրբոյն Ոսկիբերանի, քաջիմաստ եւ լիաշնորհ Յօհաննիսի աստուածաբան վարդապետի բաղիշեցւոյ:

Ի Թուականիս մերում, ռճհգ. Օգոստոսի ծե:

Արդեամբք եւ ծախիւք անդամջեցի աստուածատուրի որդի մահտեսի Զաքարիային. եւ տպուելեցի պարոն սարգիսի որդի պարոն Յարութիւնն. Եւս ըստամպօլցի պարոն դանիէլի որդի տիրացու Մովսէսն. Դարձեալ ըստամպօլցի պարոն կարապետի որդի մահտեսի Գրիգորն, եւ չորից բարեպաշտիցն խորհուրդ արարեալ եւ եդուն տպագրել զմատեանս զայս.

Ի տպարանի պարոն կարապետի որդի տրուպ աստուածատուրի.

Աղաչեմ զձեզ յիշեցէք զվերոգրեցելոցս հանդերձ ննջեցելովք նոցին, և մի յապաղէք.

Այլ եւ յիշեցէք զեղբայրակիցն իմ զաւլիքսանն: Նաեւ զորդեակն իմ զյօհաննէսն. զի կարի յոյժ աշխատեցաւ ի չարեալն եւ ի ցրուելն գրոց: Այլ եւ յիշեցէք զաշխատաւորսն տպա-

digitised by A.R.A.R.@

*խնդիս, վասնզի նոցին առհասարակ որդւոցն զանիրաւս մխիթարն, եւ դեղոյն նոցին դիւրութիւն եւ որք յիշեն յիշեալ լիցին ի քրիստոսէ աստուծոյ մերմէ ամէն։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
264·7
1724

## 145

*Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. ԳՐՔՈՅԿՍ ԱՅՍ՝ ՈՐ ԱՍԻ ՀԱՆԵԼՈՒԿ։ Կ. Պոլիս, ճժբ* (112) + 16 = 128 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԳՐՔՈՅԿՍ ԱՅՍ՝ ՈՐ ԱՍԻ ՀԱՆԵԼՈՒԿ. զոր արարեալ է տեառն Ներսէսի կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի, վասն ուրախութեան մարդկան։*

*Այլեւ կարգեցաւ պատմութիւն Յարման մանկանն։*

*Տպեցեալ եղեւ ի քահանայապետութեան Հայոց տեառն Աստուածատրոյ սրբազան կաթողիկոսի ի թուին.* ռճհգ։

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
811·21 Ճն

ՆԱՆՕԹ.

1. Տպարան կամ տպագրիչ չեն յիշուած: «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»ը կը դնէ «տպ. Մարտիրոս Դպիր»։
2. Էջ 1–32՝ հանելուկներ Ս. Ն. Շնորհալիի: Էջ 33–112՝ «Պատմութիւն Ֆարման մանուկին»։ Մեր միակ օրինակի վերջաւորութեան կը գտնուի 16 էջ տարբեր զարդատառով յաւելուած մը՝ «Այս է վիճաբանութիւն մէլիմէտի, ընդ մոլլէտի ճերբողին»։

## 146

*ՆՈՐԱԳՈՅՆ ԽԱՂԻԿ ՁՕՐՈՒԹԵԱՆՑ։ Թրգմ. Յովհաննէս Վրդ. Կոստանդնուպոլսեցի (Հոլով)։ Կ. Պոլիս, տպ. Մարտիրոս Դպիր,* 1724, 250 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ՆՈՐԱԳՈՅՆ ԽԱՂԻԿ ՁՕՐՈՒԹԵԱՆՑ. Թարգմանեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցւոյ ի փառս մեծագոյնս աստուծոյ։ Եւ Տպեցեալ ի թւին* ռճհգ. *ի Հայրապետութեան տեառն Աստուածատրոյ սրբազան կաթողիկոսի*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Յիշատակարան Գրքոյս։

*Յիրաւի ըստ առաջնոյն՝ ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ մեզ։*

*Քանզի թէպէտ պարգեւ ասացելոց գրոյս այսորիկ, բազումք յառաջին փիլիսո- փայից եւ յիմաստասիրաց է ասացեալ. այլ սակայն որովհետեւ զօրութիւն բանին՝ որ*

digitised by A.R.A.R.@

*նկատել առ Հոգեւորական վարս քրիստոնէութեան, զառ բարոյական առաքինութեան, յորս ընդունելի է մեզ։*

*Վասն որոյ տեսեալ իմ զարդս չահաւէտութիւն եւ զօգտութիւն բանին՝ որ պարունակէ յինքեան զիմացուածս յոգունս հմառոտ բանիւք աստուածային իմաստութեան, սկսայ տպագրել յաջողմամբ ամենատուրր Հոգւոյն աստուծոյ՝ եւ բարեխօսութեամբ ամենօրհնեալ կուսին Մարիամու։*

*Ի Թուին Հայոց հազար հարիւր եւ եօթանասուն երկերին՝ Հոկտեմբերի Ծ Ի հայրապետութեան մերոյ տեառն Աստուածատուր աստուածարան եւ սրբազան կաթուղիկոսին։*

*Այլ եւ ի պատրիարգութեան սրբոյ գահին ապիմայ՝ ճգնողական վարուք զարդարեցելոյ եւ շնորհօք աստուածայնովք ալցելոյ տէրը հօրն մերոյ տեառն Գրիգորի արք եպիսկոպոսի։*

*Իսկ եւ յառաջնորդութեան կոստանդնուպոլսոյ՝ տեառն Յովհաննիսի աստուածարանութեան մեծի վարդապետի։*

*Արդ որք ընթանայք զսա՝ եւ որք պատահիք սմին, յիշատակեսջիք մեզ Հայր մերի պկամեցօղս եւ բզդատճառս տպագրութեան սորա։ Նաեւ զաշխատասէր մշակս գործարանի տպման, զկեարպացի զՊետրոսն. այլ եւ զՏեւլէթն. նաեւ զԱբրահամն զշարաբարդող գրոյս. հանդ յետոյ եւ զսրբագրող մաննիս զՄարտիրոս դպիրս. եւ զՄարգիս զՀայրն իմ ծերունի, եւ զուք որք յիշէք՝ յիշիք յիշեցեալք յաստուծոյ ամէն։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
2.0·2 *Յո*

## 147

*ՄԽԻԹԱՐ ՎՐԴ. ՍԵԲԱՍՏԱՑԻ. ԳԻՐՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ։ Վենետիկ, տպ. Անտոն Պոռթոլի,* 1725, 312 *էջ։*

### *ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԳԻՐՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ընդ որում գնի եւ այբբենարան, ի յուսումն մանկանց հաւատացելոց, եւ ամենից որք ունին զպիտոյս։*

*Շարադրեցեալ աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ Վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ։ Եւ տպագրեցեալ առ օգուտ ամենից ջանացողութեամբ նորին։ Ի փառս Տեառն, եւ ի պատիւ ամենասրբուհւոյ Թագուհւոյն երկնից Կուսին Մարիամու եւ ի յօգուտ ազգիս հայկազնոյ։*

*Յամի Տեառն* 1725. *Փետր.* 20.

*Ի Վէնէտիկ։ Ի Տպարանի Անտոնի Պոռթոլի. Հրամանաւ Մեծաւորաց եւ Փոխիլիէճէիւ Գերապանծացունեղի Ծերակուտի։*

### *ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
238 *Մխ*

ԾԱՆՕԹ.

Գիրքը բաղկացած է երկու հատորներէ. առաջինը կը բռնէ 1–72 էջերը եւ այբբենարան մըն է։ Երկրորդը կը սկսի էջ 73–ով, ուր կայ նոր անուանաթերթ մը, կրկնութիւն առաջինին, միայն վերցուած է «Ընդ որում գնի եւ այբբենարան» խօսքը եւ թուականը փոխուած՝ «Յամի Տեառն 1725. Մարտի 8·ր–ի։

digitised by A.R.A.R.@

## 148

*ՏՕՄԱՐ։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի*, 1725 (*տարտ.* 1726), 304 *էջ*։

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԳԻՐՔ ՏՕՄԱՐԱՑ ՀԱՅՈՑ ՀՌՕՄԱՅԵՑՒՈՑ։ ԵՒ ՊԱՐԶԱՏՕՄԱՐ։ Ըստ որոց՝ եւ Տօղ Ցովատափ։ Մարմնախաղաց։ եւ Երաշտահան։ Եւ այլ բանք պիտանիք։*

*Ի Հայրապետութեան Տեառն Աստուածատուր Սրբազան Կաթուղիկոսին։*

*Տպեցեալ եղեւ ի մայրաքաղաքն ստամպօլ։ Ի Թուաբերութեան Հայոց.* ռճհդ։ *Սեպտեմբերի,* ա։ *Ի տպարանի որդւոյ աստուածատուրոյ։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Յիշատակարան տպողի։

*Շնորհօք եւ ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ. եւ բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրավարին, եւ ամենայն սրբոց։ Տպագրեցաւ գիրքս՝ որ կոչի Տօմարագիրք։ Ի տպարանի մահտեսի աստուածատրի։ Ի Թուականիս* ռճհե։ *եւ Մարտի ամսոյ* ա–*ին։*

*Հարուստ եւ պէտքեցիկ՝ եւ գեր ի վերոյ քան զամենայն յաւելուածիւն, որք տպեցեալ էին յառաջագոյն։*

*Արդ՝ որք հանդիպիք սմա ընթեռնլով կամ զբօսնլով. յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զվերոյ գրեցեալ աստուածատուրս. եւ որդեակն իմ զյօհաննէսն. զի յոյժ աշխատեցաւ սա ի շարադրելն եւ ի սրբագրելն գրոց։*

*Այլ եւ՝ յիշեսջիք զաշխատաւորսն տպարանիս, զվանեցի եղբայրսն աւետի որդին զափրայու մխիթարն, եւ զեղբայրսն զկանտին։ Եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ։ ամէն։*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
264·11
1725

## 149

*ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ։ Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցի*, 1725, 384 *էջ*։

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*Ինկած։*

*Թերի, կը հասնի մինչեւ էջ* 352։

*Կիւլպէնկեան Մատենադարան*
264·1
1725

Կազմեց՝ Ա. Գ.

(Շար. 10)

digitised by A.R.A.R.@